

այլ փորձերի արդիւնք են կառավարութեան կամ միսիոնի կողմից կարիքների համաձայն: Միսիոնի դպրոցները աւելի բազմաթիւ են և իրենց ձեռքն է համարեա կրթութեան գործը: Բայց այդ դպրոցները հեանում են իրենց յատուկ նպատակին՝ կրօնական կրթութեան, բարձրացնելով նաև բնիկների քաղաքակրթութիւնը: Այս տեսակէտով միսիոնը մի տեսակ օժանդակ հաստատութիւն է ներկայացնում նաև պետութեան գաղթականական ձգտումներին: Տողոյում (Արևմտեան Ափրիկայում) տեղի ունեցած բանակցութիւնը գաղութների կառավարութեան և միսիոնական ընկերութիւնների մէջ ցոյց է աւելն, թէ նոյն իսկ կառավարութեան հսկողութեան ենթարկուած միսիոնի դպրոցները ծառայում են իրենց կրօնական և մանկավարժական նպատակներին: Այս դպրոցների ծաղկման հիմք պէտք է կազմէ այս դադափարը: Թէ Գերմանիան իւր քրիստոնէական քաղաքակրթութիւնը պարտաւոր է պատուաստել իւր գաղթավայրերում: Այս նպատակին ամենից յարմարը դաւանական բնաւորութիւն կրող դպրոցն է: Առանց կրօնի կառավարչական դպրոցները գաղթավայրերում պէտք է միայն բացառութիւն լինեն և տեղական անհրաժեշտութեան արդիւնք: Հասկանալի է, որ գաղթավայրերում հաստատուած եւրոպացիների երեխաների դպրոցն մէջ պէտք է կրօնի դասաւանդութիւն լինի: Վիճաբանութեան ժամանակ շեշտուեցաւ այն միտքը, թէ պէտք է աշխատել, որ գաղութների կառավարութեան և միսիոնարական գործունէութեան մէջ համերաշխութիւն ստեղծել:

Chr. d. Chr. W.

Ընդհանուր աւետարանական-բողոքական միսիոնարական
ընկերութեան միսիոնարական դասընթաց

Ընդհանուր աւետարանական-բողոքական միսիոնարական ընկերութիւնը մի օգտաւէտ ձեռնարկութիւն արաւ: Նա 120-ի չափ առաքելութեան բարեկամներ է հրաւիրել Բերլին Ապրիլի 10—12-ին, արք և կանայք, որպէս զի նրանց միջնորդութեամբ իբրև գործին տեղեակ և հեղինակաւոր անձանց, միսիոնարական գիտութեան և գործնական կեանքի մի քանի կարևոր հարցերի մասին խորհրդակցելու և միմեանց մէջ ու կեդրոնական վարչութեան հետ աւելի սերտ յարաբերութիւն ստեղծելու: Երեք աստուածաբաններ պրսփեսոք Հակման-Աոնդոնից, պատտոր Հասս-Տոկիոյից և պրոփ. Վայնէլ ենայից յանձն էին

առել դասախօսութիւններ կարդալ: Հակամանը իւր դասախօսութիւններն սկսեց Չինաստանի պատմութեան և կրօններէ մասին: Հսկայական պետութեան քաղաքական և քաղաքակրթական զարգացման մասին մի տեսութիւն անելուց յետոյ, որը ծագում է Քրիստոսից 8 դար առաջ, նկարագրեց նախ շինական հին կրօններն իրենց ընտելեան ուժերի և ննջեցելոց հողիների պաշտամունքով: Այստեղից է ծագում կոնփուցիական կրօնը մօտաւորապէս 500 տ. Ք. ա., որ աւելի ըարոյական է, և կրթութեամբ համար, այն ինչ հասարակ ժողովուրդը գոհանում էր դարձեալ Տաոխականութեամբ՝ կրօնական մտքերի և նախնական-ֆանտաստիկական ընտելիչստիպայութեան մի խառնուրդ: Սոցա վերայ աւելացաւ 65 թ. Ք. ա. նաև Բուդդայականութիւնը, որ ներմուծուեցաւ արևելեան Թուրքաստանից: Այսպիսով շինական ժողովրդի կրօնականութիւնը մի դարմանալի խառնուրդ է կազմում այլ և այլ աղբիւրներից: Պատմական միւս կրօնները՝ ինչպէս Մանիքեականութեան, իսլամի, հրէութեան և քրիստոնէութիւն տարածումը անցեալում աննշան է եղել, թէև այժմ 20 միլիոն մահմեդականներ կան: Սակայն այժմ քրիստոնէութիւնը արագութեամբ աճում է: Ութսունութ միսիոնարական ընկերութիւններ գործում են այստեղ իրենց 3203 միսիոնարներով, որոնց օգնում են 8000 ընկիւններ: Միսիոնարութեան դիւսաւոր կեդրոնները 767-ին, 3666 արտաքին իջեւաններով: Քրիստոնէութիւնը մուտք է գործել Չինաստանի ընդ 18 նահանգների մէջ: Մօտ 1/2 միլիոն հոգի ըողոքականութիւն են ընդունել, իսկ 43000 հոգի ուսանում են միսիոնարական դպրոցներու, 880,000 հոգի խնամք են վայելում նրանց հիւանդանոցներում, և այսպիսով մեծ կամ փոքր չափով շփուում քրիստոնէական գաղափարների հետ: Միսիոնարների գործունէութեան միջոցներն են հրապարակային քարոզներ, այցելութիւններ ընտանիքներում, դասախօսութիւններ, դպրոցներ, հասարակական օգնութիւն, հիւանդանոցներ և մանաւանդ դեղարաններ, գրական գործունէութիւն և գրքերի տարածում: Մեծ յոյս կայ, որ հետզհետէ քրիստոնէութիւնը խոր արմատ կրունի և ազդեցութիւն ձեռք կրերի Չինաստանում:

Չինաստանի մասին եղած դասախօսութիւններին հետևեցին պատար Հասսի դասախօսութիւնները ձապոնիայի մասին, ուր նա երկար ժամանակ գործել է, որպէս ընդհանուր աւետարանական-բողոքական առաքելութեան պատուիրակ: Այստեղ ևս երեք կրօն էր իշխում մինչև քրիստոնէութեան երկրորդ մեծ ներմուծումը. շինտոյականութիւն, որ ձապոնացիների հին,

ազգային կրօնն է, որն էութիւնն սկզբում նախահայրերն և ընտելեան պաշտամունքն էր: Այժմ այդ կրօնն ընկնում է, չնայելով կառավարութեան գործ զրած ջանքերին վերակենդանացնելու այն: Կսկ բուզգայականութիւնը հակառակ վերակց եղած հակազգեցութեան խոր արմատներն ունի ձգած ժողովրդի մէջ: Կրթուած ճապոնացին հակուած է աւելի դէպի Ասիոյն ցիւիլիզացիան, աւելի ձիւղ՝ դէպի կրօնական անտարբերութիւնը, որին աւելի զարկ է արուում կրօնի դատաւանդութեան բարձրամբ դպրոցներում: Բայց մտքերն մի փոփոխութիւն է նկատուում այս խնդրում, և այդ այն է, թէ հին կրօնները իրենց դերը կատարել են, և միայն մի նոր կրօն կարող է փրկութիւն բերել: Աւշազրութեան արժանի է այն երեւոյթը, որ մի կողմից յառաջ են գալիս ամենատեսակ նոր մարդարէներ, միւս կողմից ձգտում են քրիստոնէութեան և բուզգայականութեան խառնուրդից մի նոր կրօն ստեղծել, ճշմարիտ տիեզերական կրօն: Երկու կրօնների մէջ արգարև նմանութիւններ կան, որինսակ բարոյականութեան և փրկութեան գաղափարն մէջ, սակայն այնքան մեծ են նոցա տարբերութիւնները, որ խաբուօսիկ է այդ ձգտումը: Ընդհակառակը հետզհետէ աւելի և աւելի պարզուում է, որ քրիստոնէութիւնն է այն միակ կրօնը, որ առ Աստուած յարաբերութեան և կեանքի ճշմարիտ գնահատութեան կարող է բաւականութիւն տալ: Նկատելի է նայնպէս, որ ամենից աւելի բողոքական քրիստոնէութիւնն է աճում, թէև կաթոլիկները աւելի բազմաթիւ են: Ընդհանրապէս քրիստոնէութեան հաստատութիւնը ապահովուած կարելի է համարել իւր՝ մօտ 1000 կաղմակերպուած համայնքներով, 173 դպրոցներով, ուր 18,500 երեխաներ են կրթուում, չհաշուելով այն 50,000 երեխաները, որ յաճախում են կիրակնօրեայ դպրոցները և որ առ առաւելն է կեանքի մէջ իւր վայելած յարգանքով: Մի մեծ գուռն է բացուած քրիստոնէական առաքելութեան առաջ. ժողովրդի վերին և ներքին խաւերի մէջ դեռ նոր է սկսուած գործը: Պէտք է մեծ ուշադրութիւն դարձնել տեղացի քարոզիչների թիւը աւելացնելու և նրանց ձեռքով կառավարելու, որովհետև ազգային գաղափարը շատ զարգացած է նրանց մէջ, իսկ արտաքին առաքելութիւնը միայն սկստի նպաստէ քարոզիչներ և ընդարձակ աստուածաբանական գրականութիւն յառաջ բերելու գործին:

Երբորդ դասախօսն էր պրոփ. Վայնէլ, որ կարգաց նախկին և սիրոյ քրիստոնէութեան առաքելութեան մասին: Նա գեղեցիկ կերպով լուսաբանեց նախկին քրիստոնէութեան տա-

բաժման խնդիրները և համեմատելով ներկայ քրիստոնէութեան հետ, այն եզրակացութեան հասաւ, որ առաջինը իւր նպատակներով, պաշտօնեաներով, միջոցներով և տարածման պայմաններով գասական և օրինակելի պիտի համարուի և ներկայ ժամանակի համար: Սակայն դորա վերայ պիտի աւելացնել և ժամանակի պայմաններն ու պահանջները:

Գառախօսութիւնները աւելի լուսարանուում էին վիճաբանութիւններով և մանաւանդ երկու անգամ ազգագրական թանգարանները կատարած այցելութիւններով: Ռեզիլիսի ազգագրական թանգարանը մանաւանդ շատ հարուստ է չինական և ճապոնական քաղաքակրթութեան և կեանքին վերաբերեալ ցուցադրութիւններով: Թանգարանի տեսչի օգնականը իւր բացատրութիւններով և գործնական ցուցումներով միանգամայն պարզում և լրացնում էր այդ երկու ազգերի կրօնական աշխարհին վերաբերեալ գաղափարներն ու երևոյթները: Այդպիսի մի գործնական առաջնորդութիւն էր նաև այս ընկերութեան տեսչի դր. Ալինզի գասախօսութիւնը դասընթացքի բացուելուց առաջ: Անշուշտ այս բոլորը անհետևանք չի մնալ դասընթացքին մասնակցողների մէջ աւելի խոր գիտակցութիւն և հետաքրքրութիւն գարթեցնելու մեծ գործին համար:

Chr. d. Chr. W.

Միսիոնարական կոնգրեսն Շանխայում. Այս կոնգրեսը գումարուեցաւ Ապրիլի 25-ից մինչև Մայիսի 4-ը, որին մասնակցում էին բոլոր ազգերից միսիոնարներ՝ Անգլիացիներ, Ամերիկացիներ, Գերմանացիներ, Սկանդինաւացիներ և Զուիցերացիներ: Պատգամաւորների թիւը 400 էր, որպէս ներկայացուցիչներ 3000 միսիոնարների, 2000 եկեղեցիների և մօտ 750,000 չինացի քրիստոնեաների: Երբորդ կոնգրեսն է այս Զինատանում. առաջինը դումարուել է 1877 թ. և երկրորդը 1890 թ.: Կոնգրեսի գումարումը շատ պարզ գաղափար է տալիս քրիստոնէութեան տարածման մասին այս 30 տարուայ ընթացքում. 1877 թ. միայն 126 միսիոնար էին ներկայ, իսկ ամբողջ Զինատանում միայն 344 բողոքական միսիոնար կար: Հաւատացեալների այսպիսի արագ աճումը ի նկատի առնելով՝ հաւանօրէն այս վերջին համաժողովը կլինի, որովհետև դժուար է ամբողջ Զինատանում ցրուած քրիստոնեաների ներկայացուցչութիւն կազմել և հաւաքել: Համաժողովի գումարման առիթները հետևեալներն էին. նախ լրանում էր նշանաւոր բողոքական մի-

սինար Բորերա Մորիսոնի Չինաստան մանեւու 100 ամեակը, երկրորդ պէտք էր տօնել 135 միսիոնարների և 30,000 չինացի նորահաւատների մարտիրոսութիւնը, որ կատարուեցաւ 1890 թուին: Նոցա յիշատակին էր նուիրուած մի մեծ շէնք Martyrs Memorial Hall-ը՝ որ և գումարուեցաւ կոնգրեսը: Համաժողովի շատ կարևոր խնդիրներ խորհրդակցութեան նիւթ եղան: Առաջին խնդիրն էր Չինաստանի այլ և այլ ուղղութեան պատկանող բողոքականներից մի ամբողջական եկեղեցի կազմել. առ այժմ բաւականացան խմբակցութիւններ և զաշնակցութիւններ կազմելով: Այս մերձեցման որպէս նշան որոշուեցաւ Ս. Գրքի ամբողջութիւն կազմող մի թարգմանութիւն հրատարակել չինարէն լեզուով: Մինչև այժմ եղած թարգմանութիւնները կատարուել են մաս առ մաս և անհատների ձեռքով, այդ պատճառով էլ խայտառդէտ է այն թարգմանութիւնը: Դեռ ևս 1890 թուի համաժողովի մէջ զգացուած էր այդպիսի մի նոր թարգմանութեան կարևորութիւնը և երեք յանձնաժողով էր հաստատուած, որ պէտք է պատրաստէր գասական, միջին և մանդարինների չինարէնով Ս. Գրքի թարգմանութիւններ: Տասն և եօթ տարուա՝ աշխատութիւնն այժմ դրուած էր համադումարի առաջ քննելու և հաստատելու:

Մի ուրիշ կարևոր խնդիր դասաւանդութեան հարցն էր: Միսիոնարները Չինաստանի բոլոր նահանգներում կարողացել են եւրոպական հասկացողութեամբ դպրոցներ հաստատել: Թէև այդպիսի բազմաթիւ հաստատութիւններ հիմնելու համար նիւթականի կարիք ունին նոքա, բայց անհրաժեշտ է համարուում այդ դպրոցների պահպանութիւնը և բարեկարգութիւնը: Խորհուրդը պէտք է ցուցումներ տար, թէ ինչպէ՞ս պէտք է դպրոցական բարեփոխութիւնների հետ գործն այնպէս կարգաւորել, որ մտաւորականի բարեկարգութեամբ անփութութեան շմատնուէր կրօնական և բարոյական դաստիարակութեան գործը:

Երրորդ խնդիրն էր, թէ ի՞նչպէս պէտք է նորահաւատներին միսիոնարները պաշտպան հանդիսանան չինական դատաստանատներում: Չորրորդ, թէ քրիստոնէութիւնը ի՞նչ գիրք պիտի բանէ Չինացիների նախնեաց սգիների պաշտամունքի վերաբերութեամբ: Յանձնարարուեցաւ նոյնպէս մի բացառութեամբ դիմել կայսրին և ցոյց տալ, որ բողոքականութիւնը հոգևոր և մարդասիրական ձգտումներ ունի Չինաստանում և կրօնի պատուութեան շնորհը խնդրէ նորանկի: